ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի նոյեմբերի 09-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/19»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 06.11.2026թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 09.11.2026թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Հարգելի՛ պատվիրատու, Հրավերում նշված է, որ օդորակիչների տեղադրումը՝ ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը, ինչպես նաև վերամբարձ կռունկի ծախսերը կատարվում են վաճառողի միջոցներով: Խնդրում ենք հստակեցնել՝ արդյոք նախատեսվում է նաև հին օդորակիչների ապամոնտաժում և դրա հետ կապված լրացուցիչ աշխատանքներ: Միաժամանակ խնդրում ենք նշել՝ վերամբարձ կռունկի օգտագործման անհրաժեշտությունը վերաբերում է բոլոր օդորակիչների՞ն, թե՞ միայն որոշակի քանակի: Խնդրում ենք հնարավորինս հստակ ներկայացնել աշխատանքների ծավալները, որպեսզի մասնակիցները կարողանան ճիշտ հաշվարկել իրենց գնային առաջարկները և նախապես գնահատել բոլոր ծախսերը:»

Պարզաբանում

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկա հանդիսացող օդորակիչների տեխնիկական բնութագրերով հին օդորակիչների ապամոնտաժման և դրա հետ կապված լրացուցիչ աշխատանքների իրականացում նախատեսված չէ: Ինչ վերաբերում է վերամբարձ կռունկի օգտագործմանը, ապա այն կիրառվելու է ըստ անհրաժեշտության՝ տեղում աշխատանքների փաստացի պայմաններից ելնելով, օդորակիչների անվտանգ և պատշաճ տեղադրումն ապահովելու նպատակով:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: